

<b>Գլխավոր տեղեկություն</b>	
Համար	N 611-L
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (23.05.2025-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2025.05.12-2025.05.25 Պաշտոնական հրապարակման օրը 22.05.2025
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	22.05.2025
Ստորագրող մարմին	ՀՀ փոխվարչապետ
Ստորագրման ամսաթիվ	22.05.2025
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	23.05.2025

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մայիսի 2025 թվականի N 611-L

#### ՄՅՆՈՒՐՏԱՅԻՆ ՕՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- Հաստատել մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
փոխվարչապետ

Երևան

S. Խաչատրյան

22.05.2025  
ՀԱՎԱՍՏԱՎՈՅ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱԳԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված  
ՀՀ կառավարության 2025 թվականի  
մայիսի 22-ի N 611-L որոշման

### Ծ Ր Ա Գ Ի Ր

#### ՄՅՆՈՒՐՏԱՅԻՆ ՕՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2025-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	Պատասխանատու	Համակատարողներ	Ֆինանսավորման աղբյուրը
1. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում						
1.1	Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացում	1) Նոր անշարժ դիտակայանների ձեռքբերում, մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի ավտոմատացման շարունակական զարգացում ընդգրկելով ՀՀ 14 բնակավայրերը: (Երևան 6 դիտակայան, Գյումրի 1 դիտակայան, Վանաձոր 1 դիտակայան,	2025 թ. և շարունակական	Շրջակա միջավայրի նախարարություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Պետական միջոցներ կամ օրենքով չարգելված այլ միջոցներ  <b>2025 թ.</b> (2 դիտակայան)  պետական բյուջե 300 000 հազ. դրամ պահպանման և

	<p>Ալավերդի 1 դիտակայան, Հրազդան 1 դիտակայան, Արարատ 1 դիտակայան, Քաջարան 1 դիտակայան, Կապան 1 դիտակայան, Ծաղկաձոր 1 դիտակայան) Միջազգային չափանիշներին համապատասխան, առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հաստատված, մարդու առողջության համար հիմնական վնասակար աղտոտիչների (ներառյալ փոշու մասնիկները՝ PM2.5 և PM10, ազոտի և ծծմբի երկօքսիդները, ածխածնի մոնօքսիդը, գետնամերձ օզոնը) չափման և իրական ժամանակին, և օպերատիվ հանրությանը ներկայացնելու հնարավորություն:</p>				<p>շահագործման ծախս 60 000 հազ. դրամ</p> <p><b>2026 թ.</b> (4 դիտակայան) 600 000 հազ. դրամ, պահպանման և շահագործման ծախս 120 000 հազ. դրամ</p> <p><b>2027 թ.</b> (5 դիտակայան) 750 000 հազ. դրամ, պահպանման և շահագործման ծախս 150 000 հազ. դրամ</p> <p><b>2028 թ.</b> (2 դիտակայան) 300 000 հազ. դրամ, պահպանման և շահագործման ծախս 60 000 հազ. դրամ</p> <p><b>2029 թ.</b> (1 դիտակայան) 150 000 հազ. դրամ, պահպանման և շահագործման ծախս 30 000 հազ. դրամ</p>
	<p>2) Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի շարժական դիտակայանի ձեռքբերում</p> <p>Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգում անհրաժեշտ է ունենալ շարժական դիտակայաններ, արդյունքում</p> <ul style="list-style-type: none"> <li>● մշտական դիտակայան չունեցող բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի ժամանակավոր գնահատման հնարավորություն</li> </ul> <p>մթնոլորտային օդի աղտոտվածության արտակարգ իրավիճակներում հրդեհ, պայթյուն և այլն, թե՛ կետին մոտ դիտակայանի տեղակայման և իրական ժամանակում բնակչության շրջանում իրազեկման աշխատանքների իրականացման հնարավորություն</p>	2029 թ.	Շրջակա միջավայրի նախարարություն		<p>Պետական միջոցներ կամ օրենքով չարգելված այլ միջոցներ</p> <p>(2 շարժական դիտակայան)</p> <p>400 000 հազ. դրամ</p> <p>Շարժական դիտակայանի տարեկան պահպանման և շահագործման ծախսը կազմում է 70 000 հազ. դրամ</p>
	<p>3) Օրգանական աղտոտիչների և փոշու մեջ ծանր մետաղների ներառում</p> <p>դիտարկումների համակարգում</p> <p>Օրգանական աղտոտիչների և փոշու մեջ ծանր մետաղների որոշման համար լաբորատոր կարողությունների</p>	2028 թ.	Շրջակա միջավայրի նախարարություն		<p>Պետական միջոցներ կամ օրենքով չարգելված այլ միջոցներ</p> <p>400 000 հազ. դրամ - 600 000 հազ. դրամ, պահպանման ծախսերը կազմում է 30-</p>

		զարգացում և օրգանական ադոտոտիչների լաբորատոր փորձարկումների հավատարմագրման գրանցումներն ապահովելու համար:				50000 հազ. դրամ
		4) Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների որակի հսկողություն, կարողությունների զարգացում  Միջազգային ստանդարտներով հավատարմագրված համապատասխան ռեֆերենս լաբորատորիայի առկայություն: Արդյունքում տարբեր կազմակերպությունների կողմից մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի սարքավորումների ստուգաճշտման հնարավորություն՝ ապահովելով մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների ճշգրտությունը, հետևողականությունը և հուսալիությունը.	2028 թ.	Շրջակա միջավայրի նախարարություն		Պետական միջոցներ կամ օրենքով չարգելված այլ միջոցներ  200 000 հազ. դրամ - 500 000 հազ. դրամ Ռեֆերենս լաբորատորիայի տարեկան պահպանման ծախսերը կազմում է 20 000 հազ. դրամ
		5) Մթնոլորտային օդի որակի մոդելավորման, կանխատեսման համակարգի (ծրագրի) ստեղծում և կիրարկում  Մթնոլորտային օդի ադոտոլվածության բաշխվածության, անշարժ աղբյուրներից արտանետումների տվյալների հետ համադրման մոդելավորում, կանխատեսման գործիքակազմի ստեղծում, արդյունքում՝ 1. շրջակա միջավայրի ազդեցության գնահատման նախագծերի նախնական փուլում տվյալ գործունեության ազդեցության առավել ճշգրիտ գնահատում և կանխատեսում 2. օդի որակի վրա ադոտոլվածության կրճատմանն ուղղված միջոցառումների դերի գնահատում և կանխատեսում	2027 թ.	Շրջակա միջավայրի նախարարություն		Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում:
<b>2. Օրենսդրական դաշտի վերանայում</b>						
2.1	<b>Քաղաքաշինության կոմիտեի 2008 թվականի հունվարի 14-ի «ՀՀՇՆ Լ-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասին»</b> հրամանում փոշենստեցման, այդ թվում փոշենստեցման, այդ	Շինարարության բնագավառում փոշենստեցման՝ այդ թվում փոշենստեցման սարքավորումների, կիրառման պահանջի սահմանում, որը հնարավորություն կտա կանխարգելել շենքերի և շինությունների կառուցման (վերակառուցման, վերականգնման, քանդման, հիմնական և ընթացիկ նորոգման), ինչպես նաև փոշու	2026 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ,  Երևան քաղաքում փոշենստեցման, այդ թվում փոշենստեցման սարքավորումների, կիրառման պահանջի սահմանում 2025 թվականի դեկտեմբերի 1-	Շրջակա միջավայրի նախարարության Քաղաքաշինության կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակ  Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին  Քաղաքաշինության, տեխնիկական, հրդեհային անվտանգության	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում:

	սարքավորումների, կիրառման պահանջի սահմանում	արտանետման հետ կապված այլ աշխատանքներ իրականացնելիս փոշու արտանետումների շինարարական հրապարակից դուրս տարածվելը՝ հիմնված քաղաքաշինական նորմատիվների հստակ պահանջմամբ՝ փուլային տարբերակով:	ին տասնօրյակ		տեսչական մարմին Երևանի քաղաքապետարան	
2.2	«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N 15-Ն հրամանի մեջ լրացում կատարելու մասին» հրամանի նախագիծ	Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներում կներառվեն փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառման պահանջը՝ համապատասխան հաշվարկ հիմնավորումներով, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի նվազեցնել հանքարդյունաբերության ոլորտում փոշու արտանետման տարածումը:	2026 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ  Երևան քաղաքում փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների, կիրառման պահանջի սահմանում 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Շրջակա միջավայրի նախարար-րության Քաղաքաշինության կոմիտե Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար-րություն	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ  Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին  Քաղաքաշինության, տեխնիկական, հրդեհային անվտանգության տեսչական մարմին  Երևանի քաղաքապետարան	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում:
<b>3. Իրազեկման, բացատրական աշխատանքներ համայնքներում քաղաքացիների շրջանում</b>						
3.1	Միջգերատեսչական համատեղ միջոցառումների իրականացում	Համայնքներում քաղաքացիների շրջանակում բացատրական, իրազեկման աշխատանքներ մթնոլորտային օդի աղտոտող վնասակար մարդածին երևույթների և դրանց հետևանքների վերաբերյալ, մասնավորապես՝ խոզանների, չորացած բուսածածկույթի, արտադրական թափոնների, վտանգավոր թափոնների այրման հետևանքների մասին բացատրական աշխատանքներ	2025 թ. և շարունակական	Շրջակա միջավայրի նախարար-րություն	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար-րություն  Առողջապահության նախարար-րություն Մարզպետների աշխատակազմ (առողջապահության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություններ) Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (տարածքային ստորաբաժանումներ) Տեղական ինքնակառավարման մարմիններ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում:
<b>4. Վարչական պատասխանատվության միջոցների խստացում</b>						
4.1	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ մթնոլորտային օդի պահպանության պահանջների դրույթների վերանայում	1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 81.1-ին հոդվածով նախատեսված յուրաքանչյուր իրավախախտման համար նախատեսել առանձին պատասխանատվության միջոցի և սահմանաչափի կիրառում:	2026 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Շրջակա միջավայրի նախարար-րություն	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ  Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում:

5.1	Կանաչ տարածքների ավելացում	Երևան քաղաքում կանաչապատ տարածքների ավելացում (Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ցուցված մեկ շնչին բաժին ընկնող կանաչ տարածքների ցուցանիշների ապահովում) (1 շնչի համար առնվազն 9 քառ. մ կանաչապատ տարածք)	5.1.1 Կենտրոնական և արևմտյան մասերի 2025 թ. 6 շարունակական	Երևանի քաղաքապետարան		Երևան քաղաքի բյուջե կամ պետական բյուջե (բնապահական-կան վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով) կամ ֆինանսավորման այլ աղբյուրներ
						<p>2025 թ. 10 հա կանաչապատ տարածք 100 000.0-150 000.0 հազ. դրամ 2026 թ. 7 հա կանաչապատ տարածք 70 000.0- 105 000.0 հազ. դրամ 2027 թ. 7հա կանաչապատ տարածք 70 000.0- 105 000.0 հազ. դրամ 2028 թ. 7հա կանաչապատ տարածք 70 000.0- 105 000.0 հազ. դրամ 2029 թ. 5հա կանաչապատ տարածք 50 000.0- 75 000.0 հազ.դրամ 2030 թ. 5հա կանաչապատ տարածք 50 000.0- 75 000.0 հազ. դրամ</p>
5.2	Ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների չափման համակարգի և վերահսկողության գործընթացի կատարելագործում	Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական զննության շրջանակներում շարժիչի արտանետումների չափման գործընթացի ամբողջական թվայնացում, տեխնիկական զննության կայանների տեխնիկական վերազինում, արտանետումների ստուգման գործընթացի նկատմամբ վերահսկողության էլեկտրոնային եղանակով ապահովման առաջարկությունների մշակում:	2025 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար-րություն	Շրջակա միջավայրի նախարար-րություն,  Ներքին գործերի նախարար-րություն Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	Օրենքով չարգելված միջոցներ

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետի աշխատակազմի  
ղեկավար**

**Ա. Հարությունյան**

22.05.2025  
ՀՍԿԱՍՏԿԱՑ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 22 մայիսի 2025 թվական:**

